

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտի միջև ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում 2024թ. փետրվարից կմեկնարկեն ֆրանսերեն լեզվի անվճար դասընթացներ՝ Գավառի տարածաշրջանի 11-14 տարեկան դպրոցականների համար:

Դասերը կանցկացվեն Ֆրանս-Ֆորմասիոն Ինտերնասիոնալ կազմակերպության կողմից ուսումնական տարվան զուգահեռ հեռավար տարբերակով՝ ամենամսյա օֆլայն հանդիպումների հնարավորությամբ:

Դասերի հաճախականությունը՝ շաբաթական 2 օր, օրական 2 ժամ տևողությամբ:

Դասընթացին զուգահեռ մասնակիցները հնարավորություն կունենան ամբողջ տարվա ընթացքում կամավոր հիմունքներով մասնակցել ֆրանսախոս մշակութային միջոցառումների:

Գրանցվելու համար անհրաժեշտ է զանգահարել 093 48 29 06 / 096 48 29 06 հեռախոսահամարներով կամ անցնել <https://france-formation.am/hy/contact-us> հղումով, լրացնել անունը, ազգանունը, հեռախոսահամարը, էլ. փոստը, հաղորդագրություն դաշտում գրել Դասընթացներ Գավառում, սեղմել ուղարկել կոճակը:

Գրանցման վերջնաժամկետը՝ հունվարի 30-ն է: